

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
(21 փետրվար, Բուն Բարեկենդան)

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, ամէն»:

«Սիրեցէք զմիմեանս»: Սիրեցեք մեկդ մյուսին:

«Սիրեսցես զընկեր քո, իբրև զանձն քո»: Սիրիր քո ընկերոջը, ինչպես քո անձը:

«Սէր երբեք ոչ անկանի»: Սերը երբեք չի կորչում:

Սիրելի հավատացյալներ, ահա երեք պատգամներ, որ արտասանած է երկու հազար տարիներ առաջ մեր Փրկիչը Հիսուս Քրիստոս: Հիսուսի Ավետարանը տակավին բազմաթիվ նման արտահայտություններ ունի սիրո մասին, մարդասիրության մասին: Դրա համար էլ Հիսուսի Ավետարանը կոչված է նաև սիրո Ավետարան, իսկ քրիստոնեական ուսմունքը՝ սիրո վարդապետություն:

Իրոք, մարդկային կյանքում, և՛ ընտանեկան կյանքում, և՛ հասարակական կյանքում, և՛ աշխատանքի վայրում, ի՞նչ կա ավելի կարևոր և անհրաժեշտ, քան մարդկանց փոխադարձ սերը մեկը մյուսի նկատմամբ: Մարդկային ընտանեկան և հավաքական կյանքի հիմքերը ամրացված են մարդկանց փոխադարձ սիրո հարաբերությունների վրա: Առանց անխառն սիրո վատառողջ վիճակ կստեղծվի թե՛ ընտանիքում, թե՛ աշխատանքի վայրում, թե՛ հասարակական կյանքում և թե՛ քաղաքացիական կյանքում:

Այս ճշմարտությունը Հիսուս հստակորեն հաստատել է և մեզ է պատգամել, որ մարդկային բնականոն կյանքի, առողջ կյանքի, շինարար կյանքի, իմաստավորված կյանքի կառույցը հիմնված է մարդկանց միջև փոխադարձ սիրո վրա: Ուրեմն քանի որ այդպես է, հարց տանք, թե ի՞նչ պետք է հասկանանք սեր ասելով, մարդասիրություն ասելով:

Հավաքական կյանքում, սեր ասելով պետք է հասկանալ առաջին հեր-

թին՝ գութ և կարեկցություն մեր նմանների նկատմամբ: Երբ մեկը հիվանդ է, երբ մեկը չքավոր է կամ զրկանքների մեջ, կամ անիրավված,—ահա այդպիսիների նկատմամբ մենք քրիստոնեաբար զգում ենք կարեկցություն, գութ: Մարդկային ամենաազնիվ զգացմունքներից մեկն է գութը և գերազանցապես քրիստոնեական:

Երկրորդ՝ սեր, մարդասիրություն ասելով պետք է հասկանանք մեր նմաններին օգնելու մեր մղումը: Բոլոր ազնիվ մարդիկ, որոնք կարեկցում են իրենց նմաններին, նաև նրանց օգնելու մասին են մտածում: Չի բավեր միայն կարեկցել հիվանդին, աղքատին, տկարին, զրկյալին, սգավորին կամ անարդարվածին, այլ պետք է նաև նրան օգնության ձեռք երկարել: Դա իրավ սիրո արտահայտություն է: Եվ օգնելու տարբեր ձևեր կան: Կարելի է նյութապես օգնել, կարելի է և բարոյապես օգնել, կարելի է մեկին հոգեպես մխիթարել, կարելի է բարի խորհուրդներով օգտակար լինել, կարելի է քաջալերել, հույս ներշնչել: Մարդասիրություն ասելով պետք է հասկանանք նաև մեկս մյուսի նկատմամբ գնահատանքի վերաբերում ունենալ: Ամեն մարդ ծնված է որոշ ընդունակություններով, որոշ շնորհներով, առավել կամ նվազ չափով, և մեզանից ամեն մեկը իր նմանի մեջ պետք է տեսնե և գնահատե այդ շնորհը, այդ ընդունակությունը: Պետք է գնահատենք նրանց բարի գործերը, նրանց շինարար աշխատանքը, նրանց ազնիվ ձգտումները:

Եվ, վերջապես, սեր ասելով պետք է հասկանանք նաև ներողամտություն: Եթե իսկապես մեկը մյուսին սիրում է, նրա հանդեպ լինում է նաև ներողամիտ, որովհետև ամեն մարդ ենթակա է սխալվելու: Ավետարանն ասում է. «Ո՞վ է այն մարդը, որ ապրում է և մեղք չի գործում», Բոլոր մարդիկ, հավասարապես կարող եմ ասել, ենթակա են սխալմունքների և տկարությունների: Իսկապես սեր ունեցողը դեպի իր ընկերը ներողամիտ կլինի, խստասիրտ չի լինի և բազում անգամներ բարի խոսքով կփորձի նրան ցույց տալ ուղիղ ճանապարհը: Ուրեմն, ներողամտության ոգին էլ կարևոր արտահայտություններից մեկն է մարդասիրության, ընկերսիրության:

Այսպիսով, գութ և կարեկցանք, ընկերոջը օգնելու ձգտում, գնահատանքի վերաբերմունք դեպի մեր նմանները, և նաև ներողամտության ոգի,—ահա այս բոլորով արտահայտվում է ճշմարիտ մարդասիրությունը, ճշմարիտ ընկերսիրությունը հասարակական կյանքում:

Սիրելի հավատացյալներ, Հիսուս, որպեսզի ավելի հստակ, հասկանալի դարձնի սիրո իր պատգամը, մի դեպք է պատմում: Թե մի ճամփորդ ճանապարհին հարձակումի է ենթարկվում չարագործ մարդկանց կողմից, կողոպտվում և խոշտանգվում: Ճամփորդը ծանրորեն վիրավոր վիճակում մնում է ճամփի եզերքում, գետին ընկած: Ավելի ուշ այդ ճանապարհով անցնում են ուրիշ ճամփորդներ, որոնք թեև տեսնում են գետին ընկած վիրավորին, բայց ուշադրություն չեն դարձնում ու շտապ գնում են իրենց գործերին: Ավելի ուշ անցնում է մեկ ուրիշ ճամփորդ, մի սամարացի, որ տեսնելով վիրավորին, մոտենում է նրան, կապում է նրա վերքը և վերցնում—տանում է նրան մոտակա գյուղը, որպեսզի այնտեղ խնամվի և նրա կյանքը փրկվի:

Անհավասիկ այս փոքրիկ պատմվածքով, բարի սամարացու արարքով, Հիսուս ցույց է տալիս մեզ, թե ինչպե՞ս պետք է արտահայտվի ճշմարիտ մարդասիրությունը, ճշմարիտ ընկերսիրությունը:

Սիրելի հավատացյալներ, մեր եկեղեցական արարողությունների կարգավորումով սկսում է այսօրվանից Մեծ Պահոց շրջանը: Մեծ Պահոց շրջանը

նվիրված է պառավելապես այն գաղափարին, որ մեր Եկեղեցվո զավակները այս օրերի ընթացքին առավելապես մտածեն իրենց վարքի մասին, իրենց ձեռաց գործերի մասին: Մեր ժողովուրդի զավակները հրավիրվում են, որ իրենց արարքների, իրենց խղճի դատավորը դառնան, ինքզինքնին քննեն և անդրադառնում իրենց սխալներին, իրենց նմանների հանդեպ իրենց ոչ դրական վերաբերմունքին և սրբագրեն իրենց թերությունները, սխալները ու դառնան ընկերասեր և մարդասեր:

Այսօր խոսելով ձեզ սիրո մասին, ընկերսիրության զգացմունքի մասին, կամեցա ձեզ ցույց տալ այն ճանապարհը, որ մեզ թելադրում է ինքը Հիսուս Քրիստոս, որի նպատակն է բարեկարգել, բարեմորոգել մարդկային հասարակական, հավաքական կյանքը, հնարավոր չափով հեռացնել մեր կյանքից ամեն տեսակ թերություններ, հանցանքներ, մեղքեր, որպեսզի ամեն մեկս կարողանանք բարի գործերով, առաքինի գործերով ներկայանալ մեր նմանների առաջ, Աստուծո առաջ հնարավոր չափով կատարյալ և անթերի: Իսկ մեր կատարելության և անթերիության հիմնական արտահայտությունը պետք է հանդիսանա մեր սիրո վերաբերմունքը դեպի մեր նմանները:

Թող մարդասիրության ոգին մնա և աճի ու ճառագայթի մեր կյանքում, մեր ընտանեկան և հավաքական կյանքում, մեր ազգային և հայրենական կյանքում:

Արդ, հայ հավատացյալներ, հայ ազգի զավակներ, սիրեցեք զմիմյանս: Ամեն:



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՆՈՐԱՊՍԱԿ ՍՐԲԱԶԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ՀԵՏ ՎԵՀԱՐԱՆԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԴԱՀԼԻՃՈՒՄ
(1982 թ. փետրվարի 16)

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՕԾՈՒՄ Է ՃԱԿԱՏԸ Տ. ԵՂԻՇԵ ՆՈՐԱՊՍԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ